

ՄԻԱՅՆ ՔԵՉ ՀԱՄԱՐ

Խօսք՝ Լ. Դուրեան

Երաժշտ.՝ Կ. Աւետիսեան

Ինչ լաւ աչեր ունես դու,
Աչերդ ծով են կապոյտ,
Խառնում են քո նազերին,
Հազար երազ ու գարուն:

Կրկներգ.- Հիմա ջահել սրտիս մէջ,
Գարուններ կան անհամար,
Այս քեզ համար, եար քեզ համար,
Միայն քեզ համար:

Ուր էլ գնաս, կը գամ ես,
Կը գամ գարնան հովի պէս,
Լոյս որ դառնամ քո ճամբերին,
Ես չեմ կորցնի երբէք քեզ:

Կրկներգ.- Եթէ կ'ուզես՝ կը դառնամ
Կանչող աստղեր քեզ համար,
Այս քեզ համար, եար քեզ համար,
Միայն քեզ համար:

Ինչ էլ ուզես կը դառնամ,
Այս աշխարհում քեզ համար,
Այս քեզ համար, եար քեզ համար,
Միայն քեզ համար: